

- 140 միլ մի՛ հասաք Սուրբ Կարապետ, որ էր ի վերայ բարձր լեռան, զմպէթաշէն մեծ եւ ժառանոր, որ ամէն քաղաքն առջեւն կ'երեւէր: Եւ վանաց առջեւն լայն եւ ընդարձակ դաշտն եւ մեծ օլան որպէս Սարբերթուն. եւ ամէնն
- 145 շէնլիք եւ գեղօրայք են հայի. եւ եկեղեցիք եւ վանորայք շէն:

- Եւ Սուրբ Կարապետու վանաց ներքեւէ կ'ելնէր պաղ ջուր եւ վաղէր ի դաշտն գետանման: Եւ յոյժ զարմանալի շէնք ունէր վանքն.
- 150 զի վիմափոր էր եւ ներքեւն մինչեւ ի քաղաքն մաղարայք. օթեւանք բաղումք եւ տեղիք ճգնաւորաց որպէս Տօրոսու լեառն ի Կոնիայ կամ Մանքէրմանու բէշէրանին, այս է գետնափորքն: Եւ ասին թէ աստ էր սուրբ մար-
- 155 մինն. եւ ասալի զկէսն առեալ Ղեւոնդ եւ Լուսաւոր չին մերոյ:

- Եւ այլ յառաջ մեծ գիւղն ԵՒԳՍՌԱՅ, ուր իրեք եկեղեցի, իրեք հարիւր տուն հայ: Եւ հինգ նետաձիգ հեռու գեղն ՆԻՉԻԱ, որ է
- 160 ՆԻՒՍԻԱ, ուր է մարմին սրբոյն Գրիգորի Նիւսացոյ, եղբօր մեծին Բարսղի: Եւ վանաց ներքուստ մեծ աղբիւր մի բխէ. եւ ելեալ մեծ գետ լինի, որ տասն ջաղացք շուր ածէ. եւ զամենայն դաշտն ոռոզէ. անդ կայր երանելոյն
- 165 մարմինն թաղեալ ի գուռն Եկեղեցոյ. զոր երկրպագեալ աղօթեցաք եւ մեղաց թողութիւն խնդրեցաք: Եւ կայր եպիսկոպոս մի